

ՎՐԱՍՏԱՆ

ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Կովկասային բարձրագագաթն լեռանց ամպամած կողերն՝ բնակարան նախամարդոյն և խանձարուրդ մարդկային զարմին, կարծես պահած են տակաւին իրենց առաջին գեղեցկութիւնը։ Մէկ կողմանէ կը տեսնուին Այրարատեան լեռինը, երկրորդ խանձարուրդ մարդկութեան, և միւս կողմանէ Նոյեան տապանը, պանծալով իմն իբրև գործի փրկութեան աշխարհի, ուսկից վար իջնելով նահապեան աղբաց՝ սփռեց իր որդիքը երկրիս վրայ, որպէս զի աճին ու բազմանան։

Բայց յանցանել ժամանակաց՝ այս կողմերն զանազան երևոյթ ու կերպարան առին։ Կոխկրուտեցան նախ Շաւիրամայ քաղերէն, Կիւրոսի գունդերէն և Ալեքսանդրի լեզէոններէն։ Երոյց յաջորդեց խուժադուժ ժողովրդոց հրոսախումբ բազմութիւն մը, և ապա եւրոպական խաչակիրք՝ կամեւով տնկել անդ քրիստոսի խաչանիչ դոշն ընդդէմ հեթանոսաց։ Այլ հիմա բոլոր Կովկասային համատարած լեռանց շարքն՝ Ռուսիոյ իշխանութեան տակ են, որ կը տարածէ իր տէրութեան բազուկն Արևելից վրայ, սպասելով այն օրուն՝ որ ձգէ նաև Արևմտից, ինչպէս գուշակեց կանխաւ իր հիմնադիրն։ «Առուակ գտայ զայն, ըսաւ Մեծն Պետրոս, և գետ կը թողում, որ ծով պիտի ըլլայ»։ Երուն ալիքներն արդէն մեծցան և ընդարձակեցան։ Սակայն ապագային թողով այս նախատեսութեան լուծու մը, թէ ինչ պիտի ըլլայ եւրոպական ժողովրդոց, որ անտարբեր աչք գիտողք միայն կ'ըլլան այս հսկայազօր մեծութեան, և թէ ինչ վիճակ պիտի առնուն այն անհամար ցեղերն որ կը տարածուին Կովկասեան լեռանց եզերաց վրայ, ակնարկ մը տանք Վրաց աղբին, որ քարին հովանաւորութեան

ներքև՝ խաղաղ կեանք մը կը վարէ, ոչ անյիշող իրեն աղբային ու պատմական յիշատակաց։

Վրաստանի դիրքն կը մեկնէ մեզ ըստ բաւականի իր պատմութիւնը։ Երթէ և կղզիացեալ ի ծովէ և ի լեռանց, սակայն այս բնական պատուարներով հանդերձ՝ երբէք ապահովութիւն գտած չէ։ Վասն զի միութեան կէտ մ'ըլլալով Եւրոպիոյ ընդ Ասիոյ, ցանկալի եղած է միշտ արևելեան ու արևմտեան կայսերաց։ Այլ նոյն իսկ իր ներքին վիճակն օգնած է առ այս։ Երովհետև փոխանակ ի մի կենդրոն միանալու բոլոր ազգն, իշխողաց նախանձուն ու անմիաբանութեանց պատճառաւ՝ զժտեցաւ ի բազում կուսակցութիւնս, պատահաբար միշտ թօթափելու իրենց թագաւորին լուծը։ Ուստի հպատակած են փոփոխակի մերթ Պարթևաց և մերթ Սասանեանց, մերթ Մողոլաց և մերթ Պարսից ու Օսմանեանց, և վերջապէս Ռուսիոյ։

Արաբացիք և Օսմանցիք տարբեր անուամբ կոչեմք իրարան և կը կոչեն այս երկիրը, Ռուք՝ Գրուգիա, իսկ Եւրոպացիք՝ Ճիորձիա։ Հաւանական կը թուի որ այս անունն Ս. Գէորգ կապալադովկացի զօրավարէն ծագումն առած ըլլայ, համբաւաւոր բոլոր Արևելից մէջ և մասնաւորապէս ի վրաստան։ Այս հաւանականութիւնն այնու աւելի ընդունելի է՝ որ Ս. Գէորգ աղբական էր Ս. Նունեան, պաշտպան և առաքեալ աշխարհին՝ ըստ վրաց։

Մէկն որ վրաստան մտնայ, ահարկու միանգամայն և զուարճալի երևոյթք անդէն կը յափշտակեն նորա միտքը։ Լեռինը և դաշտավայրը փոյթ ընդ փոյթ կը փոխանակեն զիրար։ Վրասն ու գեղեցիկ կատարներ, անմատչելի անտառներ, մեծատարած ու ար-

գաւառեր մարգագետիններ, սեպա-
ցեալ առապարներ, ձիւնապաճոյճ լե-
րանց գաղաթներ, սառնապատ գա-
ւակներ, զարհուրեցուցիչ գահալէժ-
ներ. մեծասքանչ և ահաւոր տեսա-
րանք մերթ ընդ մերթ ընդ առաջ կ'ել-
լան ճանապարհորդին, որուն ականջին
կը հասնի անտեսանելի անդնդոց խո-
րերէն սրընթաց հեղեղի ձայներ : Կը
տեսնայ զարմանալի ուղղութեամբ բար-
ձրացած մայրիկներ, որոց արմատները
վայրի բաղեղով պատած ըլլալուն,
դադարաւ բնակութիւն եղած են վայ-
րենի գաղանաց և թունաւոր սողնոց :
Ճանապարհորդը կը արտափի երբ հար-
կաւորի ասոնց միջէն կամ վրէժէ մ'անց-
նիլ. մէկ կամ երկու հաստ գերաններ
երկընցուցած են 'ի միոյ կողմանէ 'ի
միւսն, որոց վրայէն ոչ թէ միայն մար-
դիկ՝ այլ վաճառականաց բռններ ալ
կ'անցնին, որ եթէ քիչ մը չեղելու ըլ-
լան անգղուլթեամբ, որ ստէպ կը
պատահի, տարտարոսին մէջ կը գլո-
րին, որուն ո՞ գիտէ թէ որչափ մարդիկ
զոհ եղած են ու կ'ըլլան տակաւին :

Այս ահաւոր տեսարաններէն ետքը
ընդ առաջ կ'ելլան ընդարձակ և ան-
թափանց անտառներ, բազմութիւ ար-
գաւանդ բլրակներ, ձիւնապատ լեռանց
ուղղահայեաց գաղաթներ, աւերակայ
կոյտեր, ամենայն հրաշալի միանգա-
մայն և ահաւոր, ախորժելիք աչաց ճա-
նապարհորդին : Դաշտերն լի են վար-
դի տունկերով, պղծներով, շուշանե-
րով. կան նաև անբաւ հոտաւետ ծա-
ղիկներ և բուսոց զանազան տեսակներ,
որոց անչափ առատութիւնն կը զար-
դարէ լեռանց կողերը. բայց շատ ան-
գամ չեն պակասիր նաև յանկարծա-
կան հեղեղներ, որ անհնարին երա-
գութեամբ թափելով՝ կ'ապականեն առ-
ժամանակ մի այդ դաշտաց գեղեցիկու-
թիւնը :

Այս գետոց կամ հեղեղաց մէկն ալ
է Կուր, որ կը թանայ զՔարթլի և ու-
րուն ելերաց վրայ շինուած է թիֆլիզ
քաղաքը, փոխանակ Մծխիթայ վրաց
հին մայրաքաղաքին, երբեմն նշանա-

ւոր իր վանքերով, նշխարներով
և աւանդութեամբ : Թիֆլիզ շինուե-
ցաւ 469ին, վախտանկայ իշխանու-
թեան ատեն, և այսպէս կոչուեցաւ
իր ջերմարոց ու ծծմբային բաղա-
նեաց համար որ կը բղկին 'ի շրջա-
պատ լեռանց : Այս քաղաքը շատ ան-
գամ աւերեցաւ 'ի մերձակայ ժողո-
վրդոց, որ և բոլորովին կործանեցաւ
'ի ձեռն Աղա-Մահմուտի 1705ին. որ
ունէր յայնժամ 16,000 բնակիչ, իսկ
այժմ՝ 72,000, Եւրոպական օրինօք
կառավարեալ Ասիոյ առաւելին քաղաքն
կը համարուի. ունի հրապարակներ,
յիշատակարաններ և ընդարձակ պո-
ղոտաներ. կրկին լեռանց ստորոտը շի-
նուած է, Կուր գետին յորձանուտ և
արշաւասոյր ափանց վրայ, որ երկու
մաս կը բաժնէ զքաղաքը, հին և նոր.
հինն՝ 'ի վախտանկայ, իսկ նորն՝ ետքէն
շինուած, շատ աւելի վայելուչ քան
զառաջինն :

Վրացիք որ առաջին քրիստոսադա-
ւան ազգերէն մէկն կը համարուին, ու-
նէին շատ մը վանքեր : Մծխիթայ վան-
քէն ետքը երեւելի էր հնութեամբ Կե-
լաղի վանքը, Գութայիսէն 10 վերստ
հեռաւորութեամբ, հիմնեալ 'ի մետա-
սաներորդ դարու, նորոգիչ Դաւիթ թա-
գաւորութեան օրերը, որուն եկեղեցին
նուիրեալ էր 'ի սրտիւ ծննդեան Ս.
Կուսին, ինչպէս նշանակէ Կելաղի ա-
նունը (ծնունդ) : Այս տաճարն ճոխ ու
հարուստ էր. բիւզանդական միւսին
քարէ ոսկոյ առարկայի վրայ դասին
կամարը պարզ և Ալեքսիս Կոմնենոս
Կայսեր առ արքայն Դաւիթ Բ : Մեծ
ճոխութիւն կը տեսնուի հօս զանազան
ականց և ոսկեայ ու մետաքսեայ հիւ-
սուածոց :

Վախտանկ Զ. պատմաբան թագա-
ւորն՝ այսպէս կը նկարագրէ Վրաց բնա-
ւորութիւնը. « Բնութեամբ կարիճ են,
կ'ըսէ, տեղոյ աշխատութեան, արիա-
սիրտ, ձիավար և թեթեւաշարժ, բայց
միանգամայն հեշտասէր : Առատաձեռն
են, գանձել չեն սիրեր. և ինչպէս առ-
անձնական նոյնպէս և օտարին ընչից

չուայլ. մեծամիտ և սիրող կրթութեան, վիրք կը պաշտպանեն զիրար. յիշողք են երախտեաց, բայց և դիւրագայթը 'ի բարւոյ 'ի չարն. անհաւանք են, փառասէրք, հանճարեղք, փաղաքուշք և յանդըգունք »:

Այժմեան վրաց ժողովուրդն տղէտ է իր պատմութեան ու վտիւմի աւանդութեանց. երկու անուն միայն կը ճանչնայ, զՍ. Նունէ և զթամար թաղուհին, և այս իրեն արեւելեան անփոյթ անդգայ դանդաղութիւնն՝ մեծապէս ձեռնադրու կ'ըլլայ Ռուսիոյ քաղաքատեսութեան, Հաւասար քաղաքականին տղէտ է վրացին և իր կրօնական աւանդութեանցը, շատ փիլիսոփայական խնդրոց չի պարապիր, մտադիր է միայն գործոյն ու արուեստին:

Ի սկզբան վրացին մի Աստուած միայն կը պաշտէր, և կ'երգնուր յանուն Գարթրիսի իր հիմնադրին: Բայց երբ երկիրը Պարսից իշխանութեան ենթարկեցաւ, աստուածութեան վրայ ժողովրդեան ամենայն գաղափարներն այլայլեցան և մինչև սկսաւ աստղերուն պաշտօն մատուցանել և կենդանիքը աւտուածացուցանել. և այսպէս ապակա ներով առաւել քան զառաւել՝ հաւասարեցաւ իր տիրապետողաց, Գերագոյն Աստուծոյ մը պաշտօն մատուցանելն և աստեղաց երկրպագութիւնը՝ վերահաստատուեցաւ 'ի նոսա 'ի ձեռն Մեծին Ալեքսանդրի, ուստի մեռելակերութեան սովորութիւնն ջնջելով, հաստատեցին զմարդագոհ. քստմնելի սովորութիւն՝ որ տեեց երկար առնել, որուն փոխանակեցին ապա կենդանագոհք:

Վրացիք մէկ թագաւոր միայն կը ճանչնային. կը մերժէին զբուէարկութիւն՝ իբրև առիթ խռովութեանց, և կ'անուանէին 'ի թագաւորութիւն մի և նոյն զարմէ նոր ծնունդ մը: Վրաստանի ամենայն գաւառք կը ճանչնային կամ պարտէին ճանչնալ Գարթրի նախագահութիւնը, որոյ նամակաց արձանագրութիւնն այս կերպով էր.

« Մեք՝ արքայ արքայից, աստուածային կամօք օծեալ, տէր և ազատ իշխան, որդի Յեսեայ, Դաւթի և Սողոմոնի, տէր եօթն թագաւորութեանց, և այլն.. շնորհմբ ձեզ... »: Ուրիշ գաւառաց թագաւորն ալ մի և նոյն ձևը կը գործածէին, բայց 'ի արքայից արքայ պատուանունէն, որ միայն Գարթրի թագաւորաց պահեալ էր¹:

Վիրք քրիստոնէական հաւատքն ընդունելէն ետքը, իշխանագունք յեպիսկոպոսաց սկսան օծուիլ ընդունել. որոնք մեծ պատիւ ունէին առաջի ազգին և իրենք կ'ընկերէին զինուորաց 'ի պատերազմ՝ խաչ 'ի ձեռին. « Զգոյշ կեցէք, կ'ըսէին առ զինուորսն, մի թողուք ձեր հաւատքը, կրօնքը և սովորութիւնները. մի վախէք 'ի թշնամեաց. ահա մենք կը բանանք ճամբան ձեր առջին »:

Ըստ արեւելեան սովորութեան, վրացիք բարձից վրայ նստած կ'ուռնէին, և մատամբ կ'առնուին կերակուր, սովորութիւն՝ որ մինչև ցայսօր կը տեսնուրեք ուրեք: Թուրքականութիւնը ողբաձայն աղաղակներով կը կատարուէին. երբ վրացին կը կորուսանէր իր ընտանեաց միջէն մէկը, կը գերծէր զըլուխը, մօրուքը, յոնքն ու արտեանունքը, կը մերկանար գգեստները մինչև 'ի մէջան, և կը գանէր ինքն զինքը մինչև ցհոսել արեան: Ամբողջ տարի մ'ամառնելին շնչաւոր կենդանւոյ միս չէր ճաշակէր, և քուրձ կը զգենուր, ծածկելով գլուխը եղջերուի մօրթէ զլիւսնոցով: Այս սովորութիւններն թէ և ձեռի մասն ապա մեծապէս, բայց բոլորովին չանհետացան, յորոց ոմանք կը տեսն մինչև ցայսօր: Անուանի եղած է վրաց ազգին զիմաց վայելչութիւնը, մանաւանդ իդական սեռին, որոնք բարձրահասակ, երկայնադէս ու ազնուաբարոյ են. և ինչպէս Եւրոպացի ճանապարհորդք ալ կը վկայեն, դժուար

¹ Վրաց թագաւորաց ծագումն Խարյեւազաց Դաւթի ցեղէն կը սկսի, ինչպէս կ'ըսէ մեր պատմահայրն Մովսէս Խորենացի, և կոչուրն Աստուան զին Պորթիւրոսէն:

բաւ կը գտնուի ասոնց նման ողջ և կենդանի գէւը ուրիշ ազգաց մէջ։ Վրացիք գինեւէր են, որոյ մէջ առանց գինւոյ հալկերոյթ չըլլար։ Բնութեամբ զուարթ ու մարդասէր, քաղաքներն զանգաղ բայց վսեմ, նայուածքնին քաղցր ու երկվիմի, երգերնին ու պարերնին տխրաբեր, տրամութեան քան ուրախութեան յայտարարք։

Վրաց ինչպէս նաև բոլոր ասիական ազգաց պատմութիւնը մինչև ի ջրհեղձի վեր կ'ելլայ։ Երկրին առաջին հիմնադիրն էր Թորգոմ թոռնորդի Նոյի ի Բաբելոն, որուն որդին Գարթլոս թագաւորեց այն երկրին՝ որ ապա Վրաստան կոչեցաւ։ Մինչդեռ Հայկ, երկրորդ որդի Թորգոմայ՝ գնաց բնակելու ի Հայաստան։ Ապա Գարթլոսի որդին Մծխիթոս կանգնեց զհռչակաւորն Մծխիթ, մայրաքաղաքը Վրաց։ Սկիւթացիք Գրիստոսէ 600 տարի առաջ արչաւեցին հօն, ուր ապա բնակեցան Մարք։ Վրաստան ապաստանաւորան եղաւ Բուդայի թագաւորութեան կործանմանէն ետքը իսրայելեան ժողովրդեան, որոնք զաղթեցան ի Մրծխիթ։ Ապա Պարսից անցաւ երկիրը, և Ուսպելեանի առաջնորդութեամբ Սինէացի ընտանիք մ'եկաւ բնակելու հօն, որուն անունը տակաւին կենդանի է ի Վրաստան։ Վերջապէս Մեծին Ալեքսանդրի անցաւ երկիրը։ Բայց այս մակեդոնական տիրապետութենէն առաջ, յետ բազում յարձակմանց և արշաւանաց, թագաւորք սերեալք ի Գարթլոսէ՝ կը շարունակէին տակաւին իրենց թագաւորութիւնը։ որոնք ընկնալով հետզհետէ, նուաճեց զտէրութիւնը փառնաւազ, որուն որդին հպատակեցաւ Արշակունեաց։ և երկը թագաւորութիւնք՝ Պարսից, Հայոց և Վրաց միացան իրարու հետ։

Եւտ ժամանակաց կը վերականգնեն Սասանեանք Պարսից վաղեմի թագաւորութիւնը (226)։ և առնելով զՎրաստան Արշակունեաց ձեռքէն, որ դեռ ևս կը թագաւորէին ի Հայաստան, Շապուհի որդւոյն Միհրանայ կը յանձնեն

զՄծխիթ յամին 260։ Ասոր օրերը կը սկսի Վրաց քրիստոնէական թուականը, զոր այսպէս կ'աւանդէ նոցա ժամանակադարձութիւնը։

Գրիստոսէ վեց դար առաջ, կ'ըսէ, Հրէից գաղթականութիւն մը յետ կործանման Բուդայի թագաւորութեան՝ կու գայ կը հաստատուի ի Մծխիթ։ Ասոնք միշտ ի հազարակցութեան ըլլալով Երուսաղեմոյ հետ, ամեն տարի Զատիկն օրը՝ իբրև ներկայացուցիչ իրենցմէ մէկ քանին Երուսաղէմ կը զրկէին հանդիսին ներկայ գտնուելու։ Բայց Գրիստոսի նշանագործութեանց պատմութիւնը լսած ըլլալով, մեծ տըպաւորութիւն մ'ըրած էր վրանին։ Գրիստոսի մահուան տարին, ընտրեալ անձանց մէջ որ պիտի երթային Երուսաղէմ, Եղիսա անունով մէկ մ'ալ կար Ղեկայ ցեղէն, Հեղի քահանայապետին ազգատոհմէն։ ասոր մայրը բարեպաշտ կին մ'ըլլալով և լի հաւատովք, երգմեցոյց իր որդին որ չըլլայ թէ այս լուսոյն դէմ կենայ՝ ծագեալ ի փրկութիւն ժողովրդեան իսրայելի։ Կ'երևայ որ այս կինն յայտնութիւն մ'ունեցած ըլլայ, վասն զի խաչահանութեան ժամանակ աղաղակեց։ « Ասոր լմնցաւ իսրայել »։ և անդէն վախճանեցաւ։

Եղիսա խաչահանութեան ներկայ կը գտնուի... կ'առնուի ի զինուորաց Գրիստոսի պատմաւորէն մաս մը, տալով փոխարէն մը, զոր կը ծածկէ մեզմէ աւանգութիւնը Երբոր Եղիսա Վրաստան՝ կը վերադառնայ, իր քոյրը Սիդոնիա, մօրը վերջին խօսիցը խորամուխ և բարեպաշտութեամբ վառեալ, եղբորը ընդ առաջ կը վաղէ, ձեռքէն կ'առնու այդ նշխարը, և սրտին վրայ սեղմելով՝ կ'աւանդէ զողին։ Ի զուր կը ջանան Սի-

1 Վրաստան՝ Հայաստան աշխարհին հետ մի և նոյն ժամանակ աւետարանեցաւ, երբ առաքեալք սիռնեցան աստ անդ ի քարոզութիւն։ սակայն նոցա խոտորեցան շուտով ի հեթանոսութիւն, մինչդեռ Հայաստան պահեց մտաւոր մ'ըր քրիստոնէութիւնը, և եպիսկոպոսք յաշնդեցին իրարու անընդհան միջեւ ցՍ. Գրիգոր Լուսաւորիչ, որ դարձուց բոլոր աշխարհը ի քրիստոնէութիւն։

դռնիայի վաղամեծիկ աղջրկան ձեռքէն առնուլ պատմութեանը, և վերջապէս յուսահատեալ Աստուծոյ ըստած արքունական պարտէզին մէջ կը թաղեն զինքը, կալուած Արշակունեան իշխանի մը. ուր խորհրդաւոր մայրի մը կը բարձրանայ որ պիտի յայտնէր ապա այդ սուրբ աւանդը:

Վերադառնալով Միհրանայ թագաւորութեանը, Նունէի առաքելութեանը և քրիստոնէութեան հաստատութեանը, իբր հայաստանի մէջ արեամբ ու հալածանք կը տարածուէր ճշմարտութեան հաւատքը, Նունէ վրաստանի մէջ յերկիր տարածեալ կաղօթէր առ Աստուած ՚ի դարձ միջոցաւ ժողովրդեան, և յանուն Քրիստոսի կը փարատէր հիւանդութիւնները. և բոլոր ժողովուրդը սիրով ընդգրկելով սուրբ հաւատքը, կործանեց իր պղծալից կուռքերը, և կանգնեց փրկչական նշանը:

Ս. Նունէ ծնած էր յերուսաղէմ քրդ դարուն վերջերը, հօր կողմանէ ազգական Ս. Գէորգայ զօրավարին, և մօր կողմանէ Ծուշանայ՝ դստեր երուսաղէմայ պատրիարքին եղբորը: Մանկական հասակը տաճարին ստուերաց մէջ անցուց, վառեալ սիրով ու խմած տուրքով: Աստուծոյ: Եւ երբ առանձնութեամբ և արթնքով կ'անցընէր օրերը, Կ. Մարիամ երկնալով իրեն օր մը՝ փայտէ խաչ մը՝ տուաւ և ըսաւ թէ վրաստան երթայ. և նա մէկէն հնազանդելով վերին հրամանին, պատրիարքին վերջին օրհնութիւնն առաւ և բարեպաշտ կնկան մ'ընկերակցութեամբ ելաւ Երուսաղէմէն: Իբր Եփեսոս հասաւ՝ պատահեցաւ անդ իշխանուհոյն Հռիփսիմեայ, որ կը փախչէր իր ընկերացը հետ Դիոկլետիանոսի հալածանաց մոլեգնութենէն. բայց հօն տկարութիւն մը գալով, խռովեալ անյուսովութեամբ կը տարակուսէր թէ շա-

րունակէ ճամբան. մէկ կողմանէ աշխատութիւնն և միւս կողմանէ հեթանոսաց հաշն և երկիւղը կը սրտաբեկէին զինքը, Եւ երբ կը խորհէր ետ դառնալ, Տէրն մեր երեցաւ և զօրացուց զինքը. և շարունակելով ճամբան՝ Հռիփսիմեայ հետ հասաւ ՚ի Հայաստան. ուր չկեցաւ շատ. վասն զի երբ Տրդատ դառն խոյտնադանօք կը տանջէր զՀռիփսիմէ, զԴայիանէ և իրենց ընկերները, կոյսն Երուսաղէմացի աստուածային զօրութեամբ վառեալ՝ հասաւ ՚ի վրաստան միայնակ...

Այս անձանօթ աշխարհին մէջ քանի մը ձկնորսաց հանդիպեցաւ՝ որոնք պատմեցին իրեն թէ Մծխիթ քաղաքին մէջ Հրէից գաղթականութիւն մը կայ. զայս լսելով Նունէ՝ մէկէն հօն ուղղեց քայլերը, վասն զի սիրելի էին իրեն օտար երկրի մէջ ազգային յեշտակը. և Կուրգետին առաջնորդութեամբ հասաւ Մծխիթ: Բայց քաղաքը մոնելու ճամբուն վրայ խուռն բազմութեան մը պատահեցաւ, տեսաւ արքունական կառքը շուրջ պատեալ ՚ի հեծելախումբ ամբոխէ և յազատ որբոյ. զարմացաւ, և հարցնելով տեղեկացաւ, թէ Արմազ մեծ կուռքին տօնախմբութեան օրն ըլլալով, զհազարծելու կ'երթային: Նունէ հետեւեցաւ բազմութեան և հասաւ ինքն ալ հանդիսին տեղը. տեսաւ շատ տուածը ոսկեթել և ականակապ, շուրջ պատեալ յայլոց աստուածութեանց: Փողերն կը զարնուէին, խունկերը կը ծխուէին, զոհից արիւնը կը վազէ. Միհրան թագաւորը դետին կը խօնարհի, և իրեն հետ բոլոր ազգունի պաշտօնեայք և ժողովուրդը... Ասոնց մէջ անձանօթ կոյս մը միայն յոտին կեցած, կը խնդրէր յԱստուծոյ ճշմարտէ խայտառակել այս խաբէութեան կուռքերը... Երկինքն պարզ էր, օդն հանդաւոր, արեւ շողողուն... Յանաք. ծախափ փայլակ մ'է կը փայլէ, մըրիկ մ'է կը սաստկանայ, և ահա սեղանը կը տապալի, կուռքերը կը խորտակին, ամենքն տակն ու վրայ եղած փախուստ կը փնտռեն, թագաւորն, պալատա-

1 Այս խաչն տուեալ սրբուհոյն Նունեայ ՚ի նշան իր առաքելութեանը ՚ի կողմանա վրաստանի մասնաւոր մտազրուածեան արժանաւոր է, որ կը պահուի մինչև ցայսօր Թիֆլիզի Սինոէէկէցեայն մէջ:

կանք , ժողովուրդն ու զոհագործը... :
Նունէ միայն անխռով ծխակէզ աւե-
րակաց մէջ անշարժ կեցած՝ կ'աղօթէր
'ի խորոց սրտին :

Այս ահաւոր պատահարէն ետքը ,
Նունէ Անաստասիա անուն բարեպաշտ
կնկան մը քով աւանձնացաւ . և ապա
արքունի այգեատանեայց մէջ խղիկ մը
գտնելով՝ հօն բնակեցաւ . և մեծ ա-
նուն հանեց բազմութիւն հրաշագործու-
թեամբք : Նունէ՝ գիշերն 'ի գլուխ
կ'աղօթէր եղևնոյ մը լոյնատարած հո-
վանդն ներքև , ուր հրեշտակաց ձայ-
ներ կը լսէր , և աստուածային յայտ-
նութիւններ կ'ընդունէր : Որ մը Մծխի-
թէն Աբիաթար անուն Հրեայ մը գա-
լով՝ աշակերտեցաւ իրեն , և պատմեց
թէ ինքը Եղիասայ սերունդէն է , որ
բերաւ երբեմն յերուսաղեմէ՝ Քրիստոսի
պատմունճանը , և ասոր թաղուած տե-
ղը յայտնեց իրեն եղևնոյ մը ծառին
տակ : Նունէ ներքին յայանութեամբ
հաւատաց . նոյն օրհնեալ տեղոյն
վրայ հող ժողովեց , և այն օրէն սկսաւ
մեծամեծ բժշկութիւններ ընդունիլ լոկ
շօշափմամբ :

Անգամ մը Միհրան թագաւորին
դիտոյ տիկինն վտանգաւոր հիւանդու-
թենէ բռնուելով , հրաման զրկեց որ
այս հռչակաւոր անձանթօթն գայ զինքը
բժշկելու : Նունէ մերժեց հրամանը
և ըսաւ թէ ինքը գայ իմ խղիկս : Թագ-
ուհին զրեթէ կիսամահ կը ստիպուի
Նունէին ոտքը գալ , որ տարածելով զնա
տերևէ անկողնոյ մը վրայ , դաչել կու տայ
եղևնոյ հողոյն , և օրհնելով փայտեայ
խաչովն՝ կը բժշկէ զթագուհին , որ կ'ըլլայ
քրիստոնէայ , և կը յորդորէ առ այս
նաև իր ամուսինը . բայց Միհրան փո-
խանակ լուսաւորուելու՝ կը թշնամանայ
կրօնից դէմ : Որ մը Պարսից թագաւո-
րին բարեկամներէն մէկը՝ հիւրընկա-
լեալ իր պալատան մէջ , կը հիւանդա-
նայ մահացու : Միհրան սարսափած 'ի
պատասխանատուութենէ , աղերսագիր
կը զրկէ Նունէին որ գայ ու բժշկէ զա-
նիկա : Բայց առաջնոյն նման մերժո-
ղական պատասխան մ'ընդունելով , կը

ստիպուի խղիկը զրկել զմահացուն , որ
մէկէն բժշկուելով՝ կը դառնայ 'ի քրիս-
տոնէութիւն :

Այն ատեն ներքին զօրաւոր պատե-
րազմ մը կը սկսի տանջել զՄիհրան :
Աշխարհային զգածմամբ կը վախնար
այս հրաշքին հետևանքէն , վասն զի չէր
գիտեր թէ ինչ պատասխան տայ Շա-
հին՝ կրօնից փոփոխութեան մասին : Կը
զայրանայ , կը բռնկի , և հակառակ
բազում թախանձանաց թագուհւոյն՝
մահապարտ կը վճռէ զՆունէ . սակայն
վճռոյն կատարումը 'ի կախ կը մնայ :
Կատարութիւն մ'է կու գայ Միհրանայ
վրայ , և աղմկեալ սրտին խորհուրդնե-
րը ցրուելու համար՝ մերթ լերանց
և մերթ անտառաց մէջ կը թափառի :
Աստուծոյ ձեռքը ծանրանալով վրան ,
նոր հրաշք մ'ալ կ'ընէ սթափեցնելու
զինքը . կը զրկէ 'ի տեսանելեայ... : Եւ
ինչպէս երբեմն Պօղոս Դամասկոսի ճամ-
բուն վրայ յերկիր կործանելով կը ճանչ-
նայ ճշմարտութիւնը , նոյնպէս Մի-
հրան Աստուծոյ ամենադօր ձեռին հա-
րուածը իմանալով , կ'աղաղակէ , կը
խոնարհի և յանձն կ'առնու ընդունիլ
Նունէի հաւատքը , և ահա մէկէն կը
լուսաւորուին աչքերը ¹ :

Միհրան քրիստոնէոյ եղած կը դառ-
նայ իր արքունիքը , և կը քարոզէ այն
հաւատքն՝ որուն դէմ զինուեր էր եր-
բեմն , իսկ Նունէ լի խնդութեամբ կը
ցուցնէ իշխանին այն խորհրդաւոր ե-
ղևին ծառը , որոյ ներքև թաղուեցան
Սիդոնիա և սուրբ պատմունճանը : Մի-
հրան կը հանէ այդ նշխարը , և մե-
ծագործ տաճար մը կանգնել կու տայ
հօն , որուն մօտ շինուեցաւ ապա Մըծ-
խիթայ վանքը : Նոյն ժամանակները
մեր Տրդատ թագաւորն ալ կը դառնայ
'ի քրիստոնէութիւն Լուսաւորչայ քա-
րողութեամբ . և կոստանդիանոս կ'ընդ-
ունի քրիստոնէական կրօնքը իր աէ-
րութեան սահմանայ մէջ :

¹ Միհրան խաչ մը կանգնել կու տայ այն լերան
վրայ ուր ընդունեցաւ քրիստոնէութիւն , որ կը
սեանուի մինչև ցայսօր :

Միհրան մէկէն ե—Պօլէն քահանա-
ներ կը խնդրէ՝ վրացիքը մկրտելու . և
կայսրն ալ կը զրկէ զԵւստաքէոս Ան-
տիոքոս պատրիարքը , որով վրաց նո-
րագործ եկեղեցին նորա իրաւասո-
ւթեան կ'ենթարկի , Պատրիարքը թագա-
ւորին ընծայ կը բերէ խաչափայտի մաս
մը և Աստուածածնայ պատկեր մը , և
զՅովհաննէս իրենց եպիսկոպոս ձեռ-
նադրելով՝ կը դառնայ , Յայնժամ՝ Նու-
նէ վախճալով որ չըլլայ թէ պատուեն
զինքը՝ իբրեւ պատճառ այս ամենայն
բաներու , կ'առանձնանայ 'ի լեբինս ,
բայց Յովհաննէս հրաշլայի կերպով կը
գտնայ իր առանձնոցը :

Նունէ բաւական ժամանակ միայնու-
թեամբ ապրիւնէն ետքը , կը թողու
զբարթիք և կ'երթայ 'ի Կախէթ գա-
ւառ , աւետարանել անդ : կը վախճա-
նի 'ի Պօտայի միւրձ 'ի Սիկնաս . որուն
մահուանը ներկայ կը գտնուին Յով-
հաննէս եպիսկոպոս , Միհրան թագա-
ւոր և բոլոր արքայական ընտանիքը :
վերջին շունչը կ'առանդէ Աստուածա-
յայտութեան օրը , 35 տարի քարոզե-
լէն ետքը . և նոյն օրը վրաց եկեղեցին
մասնաւոր կը տօնէ իր յիշատակը :
Թագաւորն ու կղերն ուղեցին նորա
մարմինը Մծխիթ փոխադրել , մօտ այն
եղիւին ծառոյն՝ որուն ստուերաց տակ
կ'աղօթէր . բայց չլրցան չարժեք մար-
մինը , թուի թէ կ'ուզէր սրբուհին որ ա-
ճիւնը Կախէթի մէջ հանգչի : Միհրան
Նունեայ մեռած տեղւոյն վրայ եկեղեցի
մը շինել կու տայ 'ի պատիւ իր ազգա-
կցին Ս . Գեորգայ :

Մեծ յարգ ու պատիւ կ'ընծայէին
վրացիք Մծխիթայ եկեղեցւոյն , Թա-
գաւորը անոր մէջ կը պսակուէին ու կը
թաղուէին , զօր և թանկագին պար-
գենքով մեծացուցին , որոց և ոչ հետքն
մնացած է այսօր , Եկեղեցին բոլորովին
կործանելով , վերանորոգեց զայն ար-
քայն Ալեքսանդր՝ վրացի ճարտարապե-
տութեամբ հնգետասներորդ դարուն
մէջ , բարձրագագաթն գմբէթով : Շատ
ուխտաւորը կ'երթան յայցելութիւն
սրբոյ պատմուհանին , որուն տարեկան

յիշատակն մեծահանդէս կը կատարուի
'ի վերս հոկտեմբերի մէկին :

Միհրանայ որդւոյն Բակուրի թագա-
ւորութենէն սկսեալ մինչև վախտանկ
Գուրտ—աղանի օրերը՝ Պարսիկք ամեն
շմբք ըրին կրակի պաշտօնը վերահաս-
տատելու 'ի վրաստան . բայց վերջ ան-
խախտ կեցան իրենց կրօնիցը վրայ :
վախտանկ մեծ փոյթ տարաւ կղերը
կարգաւորելու . որոյ օրերը վրաց ե-
կեղեցին Անտիոքայ աթոռոյն իրաւա-
սութենէն ելլելով՝ առանձին պատ-
րիարքութիւն եղաւ , և բոլոր երկիրը 12
թեմ բաժնուեցաւ : վախտանկ աւելի
հաստատուն գործեց զքրիստոնէու-
թիւն 'ի վրաստան Հեղինէի հետ ամուս-
նանալով , որ էր դուստր Մեծին Լեոնի
կայսեր Արեւելից (479) : Սա հիմնեց
զՌիֆիլդ քաղաք , ուր փոխադրեց ապա
իր որդին թագաւորական աթոռը :

վրաց պատմութեան մէջ յետ Նու-
նէի երևելի եղած է Թամար թագուհին
(1174) , այնպէս որ վրացիք իրենց այս
հպատակութեան վիճակին մէջ անգամ՝
կը խորտակեն նորա անուամբը , Թամար՝
կնկան ամեն բարեմասնութեանց հետ
ունէր և թագաւորի ամեն կատարելու-
թիւն . իր ազդեցութիւնը տարածուե-
ցաւ անդր քան զվովկասեան լեբինս ,
և զինուց փառքը հնչեցին 'ի հեռաւոր
սահմանս : Պաշտպան էր քրիստոնէու-
թեան , որոյ մէկ խօսքովն մահմետա-
կանաց մեծ բազմութիւն մ'ընդգրկեց
զքրիստոնէութիւն : Մահմետականք
այնչափ կը մեծարէին զինքը , որ երբ
քրիստոնեայք Ղարս քաղաքը առին
ձեռքերէն , բնակիչք՝ քաղաքին բանա-
լիները Թամարայ ձեռքը միայն ուղե-
ցին յանձնել , որ գնաց անձամբ ընդու-
նելու զայն :

Ինչպէս յայտնի է , վերջ մահմետա-
կան տէրութենէ խորշելով՝ Հերակլի
օրերը Ռուսաց ապաւինեցան . Հերակլ
ծերացաւ առանց կարենալու խաղա-
ղել իր տէրութիւնը և ընտանիքը՝ եր-
րորդ կնոջը Տարեմանէի փառասիրու-
թեան պատճառաւ , որ կ'ուզէր թագա-
ւորեցնել իր անդրանիկ որդին փոխա-

նակ Գէորգայ, որ օրինաւոր ժառանգն էր, և ունէր ինը զաւակ: Անհաշտ հակառակութիւն մ'է սկսաւ այս ինը իշխանաց և Տարեճանէի վեց որդեոց մէջ: Եր պատճառ եղաւ խռովութեան վրաստանի և կործանման թիֆլիզի, 'ի ձեռն Աղա-Մահմուտ Պարսից խանին. որ արքունի ընտանեաց ներքին գժտութիւնն առիթ առնելով՝ իր եղբորորդին Ֆէթհ-Ալի-Շահը Երևան ղրկեց: Հերակլ առանց աղէկ պատրաստութեան՝ պաշտպանեց ինք զինքը: Բայց տեսնելով բոլոր Պարսից զօրութիւնը ընդդէմ իւր զինեալ, իմերեթի Սողոմոն թագաւորէն օգնութիւն խնդրեց, պատուիրելով նաև իր որդեոցը՝ որ դան հանդերձ իրենց զօրքերովը յօգնութիւն թիֆլիզի: Իմերեթի թագաւորը 5,000 զօրք ղըրկեց միայն:

Հերակլ լսելով Պարսից գալը՝ 40,000 զօրաց բանակաւ, ետ քաշուեցաւ դէպ 'ի թագաւորանիստ քաղաք: Ժողովուրդը սարսափած, բայց լի արութեամբ, պալատան չորս կողմը ժողովեցաւ, և կ'աղաչէր թագաւորին չթողուլ քաղաքը, և կը խոստանար պատերազմել մինչև ցոյտին կաթիլ արեան: Թագաւորը կ'երդնու մեռնիլ իր ժողովրդեան հետ, կը պատրաստուի 'ի պաշտպանութիւն, և պահապաններ կը դնէ քաղաքին դուռը, որպէս զի ոչ ոք դուրս ելլայ: Բայց չարամիտն Տարեճանէ՝ ամուսնոյն ոտքը ընկնալով կը խնդրէ որ տաւար աղնուական ընտանեաց հետ քաղաքէն ելլայ:

Արքունի ընտանեաց փախստեան լուրը ժողովրդեան ականջն հասնելով, սրտաթափ՝ բազմութեամբ կը թողուն զթիֆլիզ: Հերակլ ժողովրդեան փախուստը անգիտանալով, քաշութեամբ կ'ընդդիմանայ Պարսից, և կը յաջողի վանել առաջին յարձակումը: Շահը համարելով թէ վրաց ամբողջ զօրութիւնը թագաւորին չորս կողմը կենդրոնացած ըլլայ, կը մտածէր ետ քաշուիլ: Բայց ապա իմանալով անոնց սակաւութիւնը, կրկին անգամ կը յարձակի քաղաքին վրայ որ անապատա-

ցեր էր ժողովրդեան փախստեամբ: Հերակլ հաղիւ ինքն զինքը Կախէթ կը ձգէ, և Սողոմոն ալ իր զօրքերովը Մըծխիթ կ'ապաւինի: Թիֆլիզի մետրոպօլիտն իր կղերին հետ Սիոն մայր եկեղեցին ապաւիններ էր, բայց Պարսիկը դռները կը խորտակեն, ներս կը մտնան, կը կողոպտեն տաճարը, կրակ կու տան, քահանայքը կը սպաննեն, և մետրապօլիտն ալ կուր գետը կը ձգեն: Այս կոտորածէն սարկաւազ մը միայն ազատելով՝ կը փախցնէ վրաց Աստուածածնայ պատկերը: Ամբողջ քաղաքը մոխրոյ կոյտ մը կը դառնայ, և կ'ալորի միայն Ռոստոմ թագաւորին գեղեցիկ պալատը: Աղա-Մահմուտ կ'առաջարկէ Հերակլի պայմանադրել այս աւերակաց վրայ, բայց քաջն Հերակլ պատերազմով կ'ուզէ պատասխանել. և բառակի մը գլուխ անցած՝ կը վանէ զԽանը, որ Պարսկաստան դառնալու ատեն կը սպաննուի իր գերիններէն: Հերակլ իր կենաց վերջի տարիները Կախէթ անցուց, և մեռաւ 60 տարի թագաւորելէն ետքը՝ 'ի Թէլաֆ երկրորդ մայրաքաղաք յետ կործանման թիֆլիզի: Մարմինը մնաց հօն վեց շաբաթ, և ապա փոխադրեցաւ 'ի Մ'ծխիթ, ուր պահուեցաւ վրաց վերջին թագաւորը Գէորգ երեքտասներորդ, որ երեք տարի միայն թագաւորեց, վասն զի շարունակ ներքին և արտաքին պատերազմներէ տկարացած՝ կ'ընէր չուտով իր օրերը:

Տարեճանէ միշտ նորանոր դժուարութիւններ կը հանէր Գէորգայ առջին, և որդիքն ալ ամենին չէին հնազանդեր նորա ծայրագոյն իշխանութեանը: Ամեն կողմանէ յաջորդութեան վրայ խնդիրներ կը ծագէին. և երբ Տարեճանէի որդիքը Պարսից պաշտպանութիւնը կը խնդրէին, Գէորգ վախնալով որ չըլլայ թէ ընտանեկան երկպառակութեանց համար մահմետական լծոյն տակ ընկնայ երկիրը, որոշեց հօրը պէս բոլորովին Ռուսիոյ հնազանդիլ: Դաշնադրութիւնը կնքուեցաւ 1798ին Պոլոս կայսեր ատեն, և ռուսական զօրաց

գունդ մը մէկէն գրաւեց զՎրաստան, վաւրստելով զՕմար-Խան: Գէորգ այս կերպով վերջացուց Վրաց թագաւորութիւնը. որոյ ընտանիքն հաստատուեցան ի Ռուսաստան, և կոչուեցան իշխանք Վրաստանի:

Մեկընդմիջ գաւառը անուամբ միայն անկախ մնաց քիչ մը ժամանակ ալ. բայց Տաթիանի¹ մահուանէն ետքը իր

1 Մեկընդմիջ իշխանազունք Տաթիանի տիպոսը կը գործածէին, որ ապա ժառանգական անուն մ'եղաւ: Տաթիան իշխանազունք այժմ ի Ռու-

որդիքն ալ Ռուսաստան տարուեցան իրենց խնամակալ մօրը հետ: Երբ Նիկողայոս¹ պատանի իշխանն իր օրինաւոր հասակն առաւ 1867ին, շնորհեց իր իրաւունքն Ռուսիոյ Կայսեր՝ ընդունով հատուցում մը:

սաստան 1 միլիոն ռուպլ թոշակ ունի, որ է ըսել գրեթէ 4 միլիոն ֆրանք: Իսկ խնամակալ իշխանուհին կ'ընդունի առանձին 18,000 ռուպլ հասոյթ, որ կ'ընէ գրեթէ 72,000 ֆրանք:

1 Իշխանուհին Սալոմէ, քոյր Տաթիան պատաշնոյն, ամուսնացաւ Ա. Մուրատ իշխանին հետ:

ՈՎ ԳԻՇԵՐ

Ա

Ո՛վ գիշեր, գիշեր¹. որ զգայուն սիրտ չի ողջուներ գալուստդ և չի նախադասեր քու սնուածոյ՝ լոյսդ քան զարեգական մեծածաճանչ ճառագայթները: Մտերիմ պատմութեանդ չի մերժեր պահպանիչ քղանց մը ձգելու ինչ և է վշտակիր ընտանեաց վրայ. և չկայ արտասուք՝ որ չի ցամաքի քու մխիթարիչ քաղցրալունչ հողմոցդ առջին:

Բ

Ո՛վ գիշեր. կը գգուես հաւասար սիրով թէ պարտիզաց գողարիկ և քնքուշ վարդերը և թէ անտառաց վշտից թուփերը: Մեծ է իշխանութիւնդ, ինչպէս քու արարչիդ, ուրուն հանգիստն ու արտակիցն ես. խաւարաւդ կը պատես անխտիր զանկարողն և զամենակարողն, զհիւլս և զապարանս. մեծատան պայծառ պալատը, և վշտաբարձար աղբատին խցիկը:

Գ

Ո՛վ գիշեր. թէ որ գու չըլլայիր, ո՛վ պիտի սփոփէր իր միածին որդին կորուսանող մայրը: Գթայից է այն քունը՝ որով կը ծանրացնես վշտացելոյն արտեանունքը. որ առժամանակեայ այս մահահանգոյն վիճակին մէջ կը հատանէ կենաց անձկութեան ծովը և կը միանայ իր սիրելեաց հետ՝ զօրոնք կորոյս, և որք միայն և տառապեալ թողուցին զինքն աշխարհիս ամանց վրայ:

Դ

Ո՛վ գիշեր. երբոր բանտարկեալը իր շղթաները տեսնելով՝ յուսակորոյս լքեալ անկանի յերկիր, կը հասնիս մէկէն և քօղ մը կ'իջեցնես՝ ծածկելու իր բռնածանի երկաթեւորը, և սաստիկահար հարուածոց կապուտակ գծերը: Եւ յայնժամ յոյսը և անկալութիւնք քու ստուերիդ տակ կը թեւապարեն բանտարգելոյն չորս կողմը, և քաղցր երազք կը մեղմնի իր վիճակին խցիկութիւնները:

1 Գիշերուան վրայ բանաստեղծական այս գեղեցիկ տողերը՝ արեւելեան են, ինչպէս յայտնի պիտի ըլլայ ընթերցողին, և կ'երգուի Արեւելք շատ կողմեր բազում դարերէ ի վեր: